ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 659-Ա/2 «16» սեպտեմբերի 2019

2019 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ (ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ ՔՆՆԱՇՐՋԱՆ)՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1507-Ն հրամանով հաստատված՝ «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի» 20-րդ կետի և 23-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել <<2019 թվականի (հոկտեմբեր - նոյեմբեր քննաշրջանի)՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը>>՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:
2. Քննություններն անցկացնել 2019 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը ներառյալ:
3. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության պետին:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

16.09.2019

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Հավելված N 1

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի

և սպորտի նախարարի

2019 թ. N հրամանի

2019 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ (ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ ՔՆՆԱՇՐՋԱՆ)

1. Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները 2019 թվականի հոկտեմբեր - նոյեմբեր քննաշրջանի ընթացքում <<Համաշխարհային պատմություն>>, <<Հայաստանի աշխարհագրություն>>, <<Աշխարհագրություն>>, <<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Ռուսաց լեզու>> և <<Կենսաբանություն>> առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է Գնահատման և թեստավորման կենտրոնը (այսուհետ՝ ԳԹԿ)՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) <<Հայոց եկեղեցու պատմություն>>, Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն), <<Ռուս գրականություն>> (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար), <<Հասարակագիտություն>>, <<Ինֆորմատիկա>>, <<ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն>> առարկաների քննությունները հանձնում են բանավոր: <<Ֆիզկուլտուրա>> առարկայի քննության անցկացման եղանակը նորմատիվների հանձնումն է: Քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից, գնահատման 10 բալային համակարգով:

2. Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները 2019 թվականի հոկտեմբեր – նոյեմբեր քննաշրջանի ընթացքում <<Համաշխարհային պատմություն>>, <<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>, <<Աշխարհագրություն>>, <<Ռուսաց լեզու>>

և <<Օտար լեզու>> (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն) առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է Գնահատման և թեստավորման կենտրոնը՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն», <<Ռուս գրականություն>> (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են բանավոր: <<Ֆիզկուլտուրա>> առարկայի ստուգարքի անցկացման եղանակը նորմատիվների հանձնումն է: Քննական հարցատոմսերը կազմում են Դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

3. Դրսեկության ձևով (ավարտական՝ ուսումնական պլաններով նախատեսված առարկաներից) քննությունները դրսեկները հանձնում են համաձայն հավելված 2-ի:

4. Հարցատոմսերով կազմակերպվող բանավոր քննությունների անցկացման ժամանակ յուրաքանչյուր դրսեկ վիճակահանությամբ ստանում է առանձին առաջադրանք (հարցատոմս): Դրսեկը, բանավոր քննություններին նախապատրաստվելիս կարող է կատարել գրավոր համառոտագրում:

Դրսեկության ձևով քննությունների արձանագրությունները և գրավոր աշխատանքները պահպանվում են Դպրոցում, ավարտական փաստաթղթերը ստանալուց հետո՝ մեկ տարի:

5. Հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում ավարտական և պետական ավարտական քննական առարկանները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի:

Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով և համարվում են տարեկան գնահատականներ:

6. Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն հետևյալ սանդղակի՝

8-9 միավոր– 4	16-17 միավոր–8
10-11 միավոր– 5	18-19 միավոր-9
12-13 միավոր– 6	20 միավոր-10
14-15 միավոր – 7	

7. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու և անցկացնելու գործընթացը համակարգվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպվում են «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգի և սույն աշխատակարգի պահանջներին համաձայն:

Հավելված N 2

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի

և սպորտի նախարարի

2019 թ. N հրամանի

Ժամանակացույց

Էքստեռն կարգով հիմնական կրթության վկայական ստանալու համար քննությունների կազմակերպման

(հոկտեմբեր-նոյեմբեր քննաշրջան)

	Առարկա	**քննության անցկացման եղանակը**	**քննությունների անցկացման օրերը**
1.	Ֆիզկուլտուրա	քննություն (նորմատիվների հանձնում)	15.10.2019 թ.
2.	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	16.10.2019 թ.
3.	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	18.10.2019 թ.
4.	Հասարակագիտություն	բանավոր	21.10.2019 թ.
5.	Ինֆորմատիկա	բանավոր	23.10.2019 թ.
6.	Հայաստանի աշխարհագրություն	գրավոր	24.10.2019 թ.
7.	Կենսաբանություն	գրավոր	25.10.2019 թ.
8.	Համաշխարհային պատմություն	գրավոր	29.10.2019 թ.
9.	<<Ռուս գրականություն>> (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար)	բանավոր	11.11.2019 թ.
10.	Ֆիզիկա	գրավոր	31.10.2019 թ.
11.	Քիմիա	գրավոր	05.11.2019 թ.
12.	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն)	բանավոր	07.11.2019 թ.
13.	Աշխարհագրություն	գրավոր	12.11.2019 թ.
14.	Ռուսաց լեզու	գրավոր	13.11.2019 թ.

*Քննությունների սկիզբը՝ ժամը 11:00-ին:

Ժամանակացույց

Էքստեռն կարգով միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար քննությունների կազմակերպման

(հոկտեմբեր-նոյեմբեր քննաշրջան)

	Առարկա	քննության անցկացման եղանակը	քննությունների անցկացման օրերը
1.	Ֆիզկուլտուրա	ստուգարք (նորմատիվների հանձնում)	15.10.2019 թ.
2.	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	16.10.2019 թ.
3.	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	18.10.2019 թ.
4.	Հասարակագիտություն	բանավոր	21.10.2019 թ.
5.	Ինֆորմատիկա	բանավոր	23.10.2019 թ.
6.	Համաշխարհային պատմություն	գրավոր	25.10.2019 թ.
7.	Ռուսաց լեզու	գրավոր	28.10.2019 թ.
8.	Ֆիզիկա	գրավոր	30.10.2019 թ.
9.	Քիմիա	գրավոր	01.11.2019 թ.
10.	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն)	գրավոր	04.11.2019 թ.
11.	Կենսաբանություն	գրավոր	06.11.2019 թ.
12.	Աշխարհագրություն	գրավոր	08.11.2019 թ.
13.	<<Ռուս գրականություն>> (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար)	բանավոր	11.11.2019 թ.

*Քննությունների սկիզբը՝ ժամը 11:00-ին: